ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ՀՀՄՆՀԲՄԱՇՁԲ-19/62 ծածկագրով ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգով վերականգնողական աշխատանքների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 06.11.2019թ. ժամը 10:00-ին Էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Սիմոնյան/գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Հրանտ Հովսեփյան /գնահատող/

Ստեփան Ղազարյան/գնահատող/

Խորեն Մնացականյան /բացող/

Արմինե Ստեփանյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

Հայտերի բացման և գնահատման մասին

1. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

1.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀՄՆՀԲՄԱՇՁԲ-19/62» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. հասցեները
1	«Էոգուս» ՍՊԸ	adbinom@gmail.com
2	«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ	gevorgyan.nersisyan@mail.ru
3	«ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ	azaqaryan2011@mail.ru

2. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

3. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

4.1 Մասնակիցներ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի և «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ -ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

4.2 «Էոգուս» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես.

1) Հավելված N 1՝ Դիմում-հայտարարության 2-րդ ենթակետը լրացված է թերի, իսկ մասնակցի իրական շահառուների մասին աղյուսակում բացակայում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը,

2) ներկայացված լիցենզիան և ներդիրը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ,

3) Հավելված N 2՝ Գնային առաջարկում գնման առարկայի անվանումը չի համապատասխանում հրավերով նախատեսված գնման առարկային,

4) Հավելված N 2՝ Գնային առաջարկում «Ընդհանուր գինը» սյունակում տառերով նշված գումարը՝ գոյություն չունեցող թիվ է և չի համապատասխանում «Արժեք» և «ԱԱՀ» սյունակներում թվերով և/կամ տառերով նշված գումարների հանրագումարին: Բացի այդ, չնայած «Արժեք» և «ԱԱՀ» սյունակներում գումարները լրացված են նաև տառերով և համապատասխանում են թվերով գրվածին, սակայն «ԱԱՀ» սյունակում տառերով նշված գումարը չի համապատասխանում «Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

5.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները					
		«Էոգուս» ՍՊԸ		«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ		«ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ	
		Առաջարկված գները, ՀՀ դրամ					
		առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ
1	40563730	29052891	34863470	32100000	38520000	33166667	39800000

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6. Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

6.1 Մերժել «Էոգուս» ՍՊԸ-ի հայտը՝ հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.2 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝

1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին:

2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱՐՏՇԻՆ-1» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

7.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 6-րդ մասով ընդունված որոշումը՝ շարունակել հայտերի գնահատման գործընթացը ARMEPS համակարգով՝ էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան:

7.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ << կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից համապատասխան եզրակացությունը ստանալուց և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի ներկայացումից հետո՝ գնումների մասին << օրենսդրությամբ սահմանված ժամկետներում, ժամը 11:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 608 սենյակ, հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Կ. Սիմոնյան /նախագահ/

_____ Հ. Հովսեփյան

_____ Ս.Ղազարյան

_____ Խ. Մնացականյան

_____ Ա. Ստեփանյան

_____ Ա. Սողոմոնյան /քարտուղար/